## ՎԵՀԱՊԵՏՔ ԳԱՀԱԿԱԼՈՂՔ

ԱՆԳՂԻԱՅ կայսրուհին Վիկտորիա — Աղեքսանդրինա, ծնեալ 'ի 24 մայիսի 1819, դուստր դքսին Քենթի՝ Եդուարդայ իշխանի, որ էր որդի Գէորգայ Գ. արքայի և Մարիամու — Վիկտորիայի. յաջորդեաց իւր հօրեղբօր՝ արքային Գուլիելմի Դ., 'ի 20 յունիսի 1837, ամուսնացեալ 'ի 10 փետրուարի 1840 ընդ Փրանկիսկեայ — Ալպերտի՝ դքսին Սաքսոնիոյ. այրի մնացեալ 'ի 14 դեկտեմբերի 1861 ամին։

ԱՒՍՏՐԻՈՅ կայսրն Փրանկիսկոս — Յովսէփ Ա., ծնեալ 'ի 18 օգոստոսի 1830, ամուսնացեալ 'ի 24 ապրիլի 1854 ընդ Եղիսաբեթ — Ամելի — Եւգինեայ. ծնեալ 'ի 24 դեկ. 1837. դուստր Յովսեփայ — Մաքսիմիլիանու դքսին Պաւիերայ։

ԳԵՐՄԱՆԻՈՅ կայսրն Փրեդերիկ — Գուլիելմ — Վիկտոր — Ալպերտ, ծնեալ 'ի Բեռլին 'ի 27 յունուարի 1859. ամուսնացեալ 'ի Բեռլին 'ի 27 փետրուարի 1881 ընդ Աւգոստայ Վիկտորիա, ծնեալ 'ի 22 հոկտ. 1858. դուստր Փրեդերիկեայ դքսին Շլէզվիգ — Հոլշդայնի։

ԻՏԱԼԻՈՅ Թագաւորն Հումբերդ Ա. ծնեալ 'ի 14 մարտի 1844, ամուսնացեալ 'ի 22 ապրիլի 1868, ընդ Մարիամու — Մարգարիտայի, ծնեալ 'ի 20 Նոյեմբերի 1851, դուստր Փերդինանդի իշխանին Սաւոյեայ։

ՀՌՈՎՄԱՅ Քահանայապետն Լեւոն ԺԳ. (նախնապէս կարդինալ Յովակիմ Փէչչի) ծնեալ 'ի Քարբանէդոյ յ'2 մարտի 1810, ընտրեալ 'ի քահանայապետութիւն յետ մահուան Պիոսի Թ. (յ'7 փետրուարի 1878) 'ի 20 փետրուարի, և թագադիր եղեալ յ'3 մարտի 1878։

ՅԱՒՆԱՍՏԱՆԻ Թագաւորն Գէորգ Ա. ծնեալ 'ի 24 դեկտեմբերի 1845, ամուսնացեալ 'ի 27 հոկտեմբերի 1867 ընդ Օլկայի — Կոստանդինովնայի, ծնեալ 'ի 22 օգոստոսի 1851, դուստր մեծ դքսին Կոստանդնի — Նիկոլայովիչ։

ՇՈՒԷՏ — ՆՈՐՎԷԿԻԱՅԻ Թագաւորն Ոսկար Բ. Փրեդերիկ, ծնեալ, 'ի 21 յունուարի 1829, ամուսնացեալ 'ի 6 յունիսի 1857, ընդ Սոփիա Գուլիելմինա — Մարիաննայի, ծնեալ յ'9 յուլիսի 1836, դուստր Գուլիելմոսի՝ դքսին Նասսոյի։

ՊԵԼՃԻՈՅ Թագաւորն Լուդովիկոս — Վիկտոր — Լէոպոլտ Բ. ծնեալ 'ի Պրիւքսէլ յ'9 ապրիլի 1835, ամուսնացեալ 'ի 22 օգոստոսի 1853 ընդ Մարի — Հանրիէդ — Աննայի, ծնեալ 'ի 23 օգոստոսի 1836. դուստր Անտոն — Յովսէփ — Յովհաննէս արքիդքսի՝ փոխարքային Հունգարիոյ։

ՊՐԱԶԻԼԻ կայսրն Պետրոս Բ. Տ' Ալկանդարա, ծնեալ յ'2 դեկտեմբերի 1825, ամուսնացեալ 'ի 4 սեպտեմբերի 1843 ընդ Թերեզայի — Քրիստինեայ — Մարիամու, ծնեալ 'ի 14 մարտի 1822, դուստր Փրանկիսկոսի Ա. թագաւորի Երկուց — Սիկիլիաց։

ՌՈՒՍԻՈՅ կայսրն Աղեքսանդր Գ. Աղեքսանդրովիչ, ծնեալ 'ի 10 մարտի 1845, ամուսնացեալ յ'9 նոյեմբերի 1866, ընդ Մարիամու — Ֆէոդորովնայի, ծնեալ 'ի 26 նոյեմբերի 1847, դուստր Քրիստիանի Թ., արքային Տանիմարքի։

ՍԵՐՊԻՈՅ Թագաւորն Միլան Օպրէնովիչ Ա. ծնեալ 'ի 22 օգոստոսի 1854, ամուսնացեալ 'ի 17 հոկտեմբերի 1875 ընդ Նադալիայի, ծնեալ 'ի 14 մայիսի 1859, դուստր Քէշկոյի իշխանուհւոյն Սդուրցայի։

ՍՊԱՆԻՈՅ Թագաւորն Աղփոնս ԺԳ. ծնեալ 'ի 17 մայիսի 1886, և 'ի նմին աւուր հռչակեալ թագաւոր ընդ խնամակալութեամբ Մարիամու Քրիստինեի թագուհւոյ, կնոջ Աղփոնսի ԺԲ։

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ Սուլթանն Ապտիւլ — Համիտ — խան, ծնեալ 'ի 21 սեպտեմբերի 1842, ԼԴրորդ կայսր 'ի ցեղէն Օսմանեայ, և ԻԸ յետ առման Կոստանդնուպոլսի, որդի Սուլթան Ապտիւլ — Մէճիտ — խանի. յաջորդեաց իւր եղբօրն՝ Սուլթան Մուրատի յ'31 օգոստոսի 1876։

ՏԱՆԻՄԱՐՔԻ Թագաւորն Քրիստիան Թ. ծնեալ յ'8 ապրիլի 1818 ամուսնացեալ 'ի 26 մայիսի 1842, ընդ Կարոլինա — Աւգոստա — Լուիզայ, ծնեալ յ'7 սեպտեմբերի 1817, դուստր Գուլիելմի, Լանտկրաֆ Հէսսէ — Քասսէլի։

ՓՈՐԹՈԳԱԼԻ Թագաւորն Լուդովիկոս — Փիլիպպոս, ծնեալ յ'31 հոկտեմբերի 1838. ամուսնացեալ 'ի 6 հոկտեմբերի 1862, ընդ Մարիամու — Պիայ, ծնեալ 'ի 16 հոկտեմբերի 1847, դուստր Վիկտոր Էմմանուէլի Բ. արքային Իտալիոյ։

digitised by A.R.A.R.@